<<ԵՐԵՎԱՆԻ ԳԱՐԵԳԻՆ ՆԺԴԵՀԻ ԱՆՎԱՆ Հ.161 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ>> ՊՈԱԿ

2023-2028 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ

ՀԱՎԱԿՆՈՐԴ՝ ԼԻԼԻԹ ԷԴՈՒԱՐԴԻ ՄԿՐՏՉՅԱՆ

ԵՐԵՎԱՆ 2023

Ուսումնական հաստատության ընդհանուր նկարագիրը

Հաստատության անվանում՝ Գ. Նժդեհի անվան հ.161 հիմնական դպրոց

Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Շենգավիթ վարչական շրջան, Բագրատունյաց 32/1

Հարկայնություն 3

Շենքը՝տիպային

Մասնաշենքերի քանակ 3

Բակային տարածքի մակերես 2520մ^2

Շենքի մակերես 4537.8մ^2

Կառուցման տարեթիվ 1973թ.

Վերակառուցման տարեթիվ 2008թ. առ այսօր

Ելքերի քանակ. հիմնական՝ 3, պահեստային՝ 3

Հերթայնություն 2

Նախագծային հզորություն (աշակերտ) 860

Սովորողների թիվ 804

Աշխատակիցների ընդհանուր թիվ 81

Ֆիզարձակուրդում 4

Տնօրեն՝ Ցողիկ Գրիգորյան հեռ. 043397002

Ուսուցչանոց հեռ. 010 48-76-60

Կազմակերպա-իրավաբանական տեսակը՝ ՊՈԱԿ

Իրավաբանական տեսակը՝ոչ առևտրային

ՀՎՀՀ՝02212752

Հ/Հ ՖՆ թիվ 1 գանձապետական բաժանմունք 900018004946

Պաշտոնական կայք՝ https://yerevan161.schoolsite.am/

Սոցիալական հարթակ՝ https://www.facebook.com/groups/266939270004196

Էլեկտրոնային հասցեներ՝ school161@schoold.am

Gnjdeh_161dproc@mail.ru

Ներքին գնահատում՝ https://yerevan161.schoolsite.am/?page_id=93

Պաշարների շտեմարան՝ https://lib.armedu.am/main

Քաղաքապետարանի ներքին նամակների համակարգ https://mul2.yerevan.am/am/dashboard

ՀՀ ԿԳՄՄՆ-ի կողմից ստեղծված Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոնը /ԿՏԱԿ/ կայք https://emis.am/schools/index.php/auth

Դասագրքերի և ՏՀՏ շրջանառու հիմնադրամ https://crm.dshh.am/

Դպրոցական դասագրքերը տրամադրվում են տվյալ կայքի միջոցով

Գնահատման և թեստավորման կենտրոն https://app.dimord.am/Login.aspx

Աշակերտների ավարտական վկայականների կոդերի տրամադրման կայք https://e-diploma.emis.am/school/classrooms

Վերոնշյալ էլեկտրոնային հղումները առկա տեղեկատվության հավաստիությունը ճշտելու համար են:

Զարգացման ծրագրում օգտագործված հապավումները

ԴԶԾ-դպրոցի զարգացման ծրագիր

ՀՊՉ-Հանրակրթության պետական չափորոշիչ

ԿԶՆԱԿ-Կրթության զարգացման և նորարարությունների ազգային կենտրոն

ՀՄԿ-Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն

ՏՄԱԿ-Տարածքային մանակավարժահոգեբանական աջակցման կենտրոն

ԲՄԹ-բազմամասնագիտական թիմ-հոգեբան,լոգոպեդ,ուսուցչի օգնական,բուժքույր

ԿԱՊԿՈՒ-կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող

ՏԻՄ-Տարածքային ինքնակառավարման մարմին

ԿՏԱԿ-Կրթական տեխնոլոգիանների ազգային կենտրոն

ԳԹԿ-Գնահատման և թեստավորման կենտրոն

ԿԽ-Կառավարման խորհուրդ

Մ/Մ- Մեթոդական միավորում

ԱԽ-Աշակերտական խորհուրդ, ԾԽ-Ծնողական խորհուրդ ,ՄԽ- Մանկավարժական խորհուրդ

Սույն զարգացման ծրագիրը կազմվել է ՀՀ ԿԳՄՍ նախարարի՝ 22.09.2022թ. ,Պետական հանրակրթական ուսումնական հաստատության զարգացման ծրագրի մշակման ձևաչափը և զարգացման ծրագրի կատարման ամենամյա հաշվետվության կատարողական ցուցումներն ու պահանջները հաստատելու մասինե N 35-Ն հրամանի պահանջներին համապատասխան:

Չկա ավելի հզոր ուժ, քան գիտելիքը,
գիտելիքներով զինված մարդը անպարտելի է:
Մ. Գորկին

Առաքելությունն է

- Ապահովել կրթության որակի շարունակական բարելավում, որի նպատակն է կրթել ու դաստիարակել խորը գիտելիքներով զինված որակյալ քաղաքացիներ, ովքեր հետագայում կկարողանան արագ ինտեգրվել միջազգային կրթական չափանիշներին, ինչպես նաև այսօրվա գերժամանակակից տեխնիկայի օր օրի զարգացող դարաշրջանում բոլոր ոլորտներում կկարողանան հստակ քայլերով առաջ շարժվել դեպի գեղեցիկ ապագան:
- Ապահովել պետության կրթական քաղաքականության միտումներին, համայնքի կարիքներին ու հնարավորություններին, ինչպես նաև կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց համապատասխանող ուսումնառություն:

- Ապահովել հագեցած, հետաքրքիր կրթական գործընթաց՝ այն իրականացնելով ժամանակակից կրթական մեթոդներով, նորօրյա հարցադրումներով, ՏՀՏ բազում հնարավորություններ ընձեռող ծրագրերով, որոնց միջոցով աշակերտների կրթության և դաստիարակության գործընթացը կլինի առավել հետաքրքիր, բազմաժանր և արդյունավետ:

- Ամբողջ տարվա ընթացքում առաջնորդվել հետևյալ սկզբունքով <<Ոչինչ է այն ուսուցումը, որ չի տանում կրթության>>:

- Ուսումնական գործընթացի ժամանակ միշտ նկատի ունենալ աշակերտի մտավոր զարգացման մակարդակը, կարողությունները, ցանկությունները, հարգել նրա անհատականությունը, նրա համոզմունքները. հայեցի դաստիարակության միջոցով դարձնել նրան հայրենիքի ապագա զինվոր ու քաղաքացի:

- Առաջնահերթ դարձնել որակյալ դաս անցկացնելու խնդիրը: Յուրաքանչյուր մասնագետ պետք է քաջ գիտակցի մանկավարժի և մասնագետի իր դերը, բարձրացնի դասի արդյունավետությունը, որը պետք է զուգակցվի այն հանգամանքով, թե տրված գիտելիքի չափաբաժինը քանի տոկոսանոց հմտություն է դառնում: Դասապրոցեսին կարողանա անհատական մոտեցում ցուցաբերի յուրաքանչյուր աշակերտի հանդեպ՝ օգտագործելով վերջին տարիների վերապատրաստումների միջոցով ձեռք բերած հմտությունները՝ դրանք տեղին և ժամանակին կիրառելով դասապրոցեսին:

- Հանրակրթության պետական նոր չափորոշչին համապատասխան, համատեղ ուժերով և նոր մեթոդներով կազմակերպել կրթության որակի բարելավմանն ուղված այնպիսի դասապրոցեսներ, որի ակնկալվող վերջնարդյունքը կբխի ճիշտ պլանավորված նպատակից, կունենա այնպիսի կառուցվածք, որը հնարավորություն կտա դասապրոցեսին ընդգրկել ուսհաստատության բոլոր աշակերտներին՝ ելնելով իրենց տարիքային առանձնահատկություններից, հնարավորություններից, հմտություններից ու կարողունակություններից՝ հատուկ ուշադրություն դարձնելով ԿԱՊԿՈՒ աշակերտների կրթության ու դաստիարակության գործընթացի լիարժեք իրականացմանը:

- Ապահովել անհրաժեշտ պայմաններ և կարողանալ այնպիսի գրագետ գործունեություն իրականացնել, որպեսզի ժամանակի ընթացքում ավելանան մանկավարժական աշխատողների շրջանում կամավոր ատեստավորում անցած ուսուցիչների թիվը, ինչը էլ ավելի կնպաստի կրթության որակի բարելավմանը:

- Ապահովել մանկավարժական աշխատողների շրջանում տարակարգ ստանալու ցանկության և դրան նպաստող փուլերի իրականացման գործընթացի ճիշտ կազմակերպումը:

- Հայաստանի վաղվա քաղաքացին, այսօրվա սովորողը, պետք է դպրոցում ձեռք բերի ճանաչելու, ընկալելու, վերլուծելու, ինքնուրույն դատելու ունակություններ: Պետք է կարողանա տեղին օգտագործել կրթության գործընթացում ձեռք բերած գիտելիքներն ու հմտությունները՝ չմոռանալով թե ինչպես կարելի է այդ ամենը կիրառել և նպատակին ծառայեցնել իրական կյանքում:

- Ֆինանսատնտեսական գործունեության շահավետ կազմակերպում:

- Տեխնիկայի ակտիվ զարգացման և մեծ ծավալ գրավող դարաշրջանում մենք պետք է կարողանանք ճիշտ օգտագործել երեխաների համակարգչային գիտելիքները՝ դրանք ակտիվ ծառայեցնելով հենց իրենց կրթության ու դաստիարակության գործընթացին:

Նպատակն է

- Կարողանալ հաղթահարել կրթության ոլորտում գոյացած ներկայիս խնդիրները և ստեղծել նպաստավոր պայմաններ անհատի կրթության ու դաստիարակության գործընթացն իրականացնելու նպատակով:
- Հաշվի առնելով այն հանգամանքը, որ պարտադիր վերապատրաստման ընթացքում մանկավարժները հարստացնում են իրենց գիտելիքներն ու ՏՀՏ ոլորտի հմտությունները, հետևաբար նպատակներից մեկն է նաև առկա ռեսուրսներով ստեղծել այնպիսի նյութատեխնիկական բազա, որը կօգնի երեխաների կրթության գործընթացն իրականացնել ներկայիս չափանիշներին համապատասխան:
- Կարևորելով նաև աշակերտների ֆիզիկական պատրաստվածությունը, ստեղծել անհրաժեշտ պարագաներով հագեցած մարզադահլիճ և մարզահրապարակ, որտեղ ֆիզիկական կրթությունն ավելի նպատակային կլինի:
- Զարգացնել սովորողների կարողունակությունները
- Կրթության ճիշտ և արդյունավետ կազմակերպման նպատակով ամրապնդել ծնողական և աշակերտական խորհուրդների հետ համատեղ աշխատանքները:
- Հատուկ ուշադրություն դարձնել սովորողների համակողմանի դաստիարակությանը:
- Նպաստել ուսուցիչների տարակարգ ձեռք բերելու գործընթացին:
- Նպաստել ուսուցիչների կողմից կամավոր ատեստացիա անցնելու ցանկության խթանմանը, քանի որ մենք կհասնենք ցանկալի հաջողության այն ժամանակ, երբ կզբաղվենք ինքնակրթությամբ և ինքնազարգացմամբ:
- Վերապատրաստող ուսուցիչների առկայություն:
- Առարկայական օլիմպիադաների հանրապետական փուլին մասնակցող աշակերտների թվի ավելացում:

Սպասվելիք արդյունքները

- Հնարավորություն ընձեռել սովորողներին կրթություն ստանալու գործընթացի հետ միաժամանակ նաև կարողանալ մասնագիտական կողմնորոշում ձեռք բերել:
- Ճիշտ դատողություններ կատարող քաղաքացու և անհատի ձևավորում
- Ունենալ կրթված և դաստիարակված աշակերտական մեծ թիմ, օգտվելով ՀՊՉ-ի բոլոր նորմերից և մեթոդներից, սովորեցնել երեխաներին իմանալ թե ինչ է օրենքը, ինչ օրենքներով ենք մենք առաջնորդվում և թե այդ օրենքներն ինչ որոշիչ դեր կարող են ունենալ իրենց հետագա նպատակների իրականացման փուլում:
- Ծառայելով իր առաքելությանն ու կատարելով մեր առջև դրված խնդիրները՝ լինել օրինակելի դպրոց:
- Ստեղծել դպրոցի ակտիվ գործող շրջանավարտների խորհուրդ և ընդլայնել նրա գործունեության ոլորտը:

- Լիցենզավորման պարտադիր պահանջներին բավարարող լաբորատորիաների ապահովում, ինչպես նաև մարզադահլիճի սարքավորումների, անհրաժեշտ գույքի և գրադարանային-տեղեկատվական համակարգի բարձր հագեցվածություն:
- Սովորեցնել աշակերտներին ինքնուրույն խոսքի և դատողության քաղաքականությունը, գնահատել ժողովրդավարության իմաստը, կարողանալ ձևավորել հստակ կարծիք տարբեր իրերի և երևույթների վերաբերյալ, ձևավորել անձնային անգնահատելի արժեքներ, որոնք կյանքի ընթացքում պիտանի կդարձնեն հենց իրենց:

Սպասվելիք արդյունքներին հասնելու համար անհրաժեշտ է ապահովել մանկավարժական կոլեկտիվում գրագետ բարոյահոգեբանական մթնոլորտ, նպաստել, որպեսզի մանկավարժները ճիշտ գնահատեն իրենց դերն ու նշանակությունը դպրոցում և ապագա սերնդի կրթության ու դաստիարակության գործընթացում, մասնակցեն կամավոր ատեստավորմանը, ձեռք բերեն տարակարգ, կարողանան իրենց գիտելիքները տեղին օգտագործել և կրթել մեր հասարակության համար ուժեղ, խելացի, դատող ու կարողունակություններով հարուստ անհատներ: Աշակերտների կրթության որակի բարելավման նպատակով դպրոցում պետք է լինի ընթերցարան, որտեղ երեխաները կկարողանան աշխատել, հարստացնել իրենց գիտելիքները և դրա միջոցով արթնացնել սեր դեպի գիրքը:

Հատուկ ուշադրությամբ ցանկանում եմ անդրադառնալ 2023թ. Մայիս-հունիս ամիսներին անցկացրած «Հանրապետության հանրակրթական դպրոցների 2-րդ, 5-րդ 7-րդ և 10-րդ դասարանների ՀՊՉ և առարկայական ծրագրերին համապատասխան տնօրենների և ուսուցիչների վերապատրաստում և մենթորների կողմից աջակցության իրականացում» դասընթացին, որին պատիվ եմ ունեցել մասնակցելու և վստահաբար կարող եմ ասել, որ ունենալով գիտակ, խելացի, իրենց գործում տարբերվող և միշտ ավելին ձգտող մանկավարժական կոլեկտիվ, շատ կարճ ժամանակահատվածում կկարողանանք և յուրացնել ՀՊՉ համապատասխան բոլոր պահանջները, նաև աշակերտներին կսովորեցնենք աշխատել համակարգված, գրագետ, աշխատանքների գեղեցիկ պլանավորած ու նախապես մշակված ծրագրով:

Ճիշտ է, ունենալու ենք դժվարություններ և խնդիրներ, բայց այդ ամենը ոչինչ են, երբ գիտակցում ես մի պարզ բան. այսօրվա բազմաչարչար ու միևնույն ժամանակ սիրելի աշխատանքով վաղը կունենանք հասարակությանը պիտանի, ինքնուրույն մտածելակերպ ունեցող, խելացի դատողություններ կատարող անհատներ, ովքեր պետք է կառուցեն վաղվա չկրկնվող ապագան:

Այս, այո, դժվարին ճանապարհին, մենք պետք է միավորենք մեր ուժերը, առանց բողոքելու և աննպատակ պատճառաբանությունների, կարողանանք կրթության ռազմավարության իրականացման փուլերում ունենալ մեր փոքրիկ ներդրումը, կատարել նոր առաջարկներ, կիրառել նոր մեթոդներ, երբեք չբավարարվել արդեն եղածով և կատարվածով՝ այդ աշխատանքներին ակտիվ ներգրավելով բոլոր ամուր կապերը. Դպրոց-աշակերտ-ծնող: Մենք պետք է գիտակցենք նաև, որ պետք է առնչվենք ծնողական համայնքի այն խմբի հետ, ովքեր ոչ մի կերպ չեն ուզում լսել որևէ ներարարության մասին և ոչ թե պետք է թևաթափ լինենք, այլ հակառակը, պետք է մեր յուրաքանչյուր ակնթարթի աշխատանքով ցույց տանք, որ ուժեղ պետություն, կիրթ ու գրագետ հասարակություն ունենալու համար պետք է աշխատել և նորից աշխատել:

Մեր կոլեկտիվը պատրաստակամ է այդ հարցում և մենք միասին անպայման մեր ներդրումը կունենանք կրթական նոր բարեփոխումների բուռն ժամանակաշրջանում:

Ամենավառ օրինակն եմ ուզում բերել. Այսուհետ 7-րդ դասարանից սկսած ուսումնասիրելու ենք «Հասարակագիտություն» առարկան և երբ ուսումնասիրում ես առկա փոփոխությունների ու նորամուծությունները, հասկանում ես, թե մեկ առարկայի շրջանակներում որքան մեծ արժեքային համակարգ է ձևավորվում երեխայի մոտ. «Մարդ» հասկացություն, որի ներքո թաքնված է մարդկային տեսակն իր բոլոր դրսևորումներով, «Հասարակության հիմնասյուներ. Արժեքներ և իրավունքներ», որը հնարավորություն կտա ժամանակակից սերնդին գիտակցելու, թե որն է ուժեղ ու կայացած լինելու գրավականը և թե որքան կարևոր է իրազեկված լինել օրենսդրական դաշտի բոլոր բարեփոխումներից, «Պետություն», որն իր մեջ ներառում է աշակերտների կրթության և դաստիարակության մեջ ձևավորված մի ամբողջություն. Լինել քո պետության մի պիտանի մասնիկը և այսպես անվերջ կարելի է թվել, թե ինչ լայն հորիզոններ կարող են բացվել հենց մեր ապագա սերնդի առջև և դրա հիմնական պատասխանատուները կրթության ոլորտում աշխատող, արարող ու իրքնազարգացող մանկավարժներն են:

Մի շատ կարևոր նորարարություն կրթության ռազմավարության գործընթացում կլինի «Թվային գրագիտություն և համակարգչային գիտություն» որպես առարկա ուսաումնասիրելը: Ճիշտ է, այսօր աշակերտների 99%-ից ավելիին թվում է, թե իրենք տիրապետում են համակարգչային գիտելիքներին և առանց խնդրի կարող են օգտվել դրանից, բայց վստահ եմ շատ քչերը գիտեն, թե իրենց առաջ ինչ հնարավորություններ կբացվեն, երբ կարողանան ճիշտ ընկալել տեղեկատվական լայնածավալ և ակնթարթորեն փոփոխվող դաշտի այն գաղտնիքները, որոնց միջոցով կկարողանան գիտական ոլորտում կիրառել և ինչու չէ կատարել մինչ այսօր չբացահայտված հայտնագործություններ:

Անվերջ կարող եմ թվել, թե որքան կարևոր է կրթության ռազմավարության մեջ կիրառվող նոր և արդի փոփոխությունները, որոնք ոչ միայն աշակերտներին են հնարավորություն տալու նոր էներգիայով, մեծ սպասելիքներով ու պատրաստակամությամբ մասնակցել կրթության ու դաստիարակության գործընթացին, այլև մանկավարժական թիմին են օգնելու տեղում չմնալ և հստակ և դանդաղ քայլերով հասնել իրենց գիտական մակարդակի այն կետին, որտեղից հենց իրենք են ձգտելու էլ ավելի առաջ շարժվել:

ՀՊՉ նոր առարկայական ծրագրերի իրականացման շրջանակներում կարելի է նաև այնպես կազմակերպել կրթության գործընթացը, որպեսզի երեխաները հնարավորություն ունենան նաև ստացած գիտելիքները տեսնել գործնականում, հնարավորություն ունենան էքսկուրսիաներ կազմակերպել դեպի վայրեր, որտեղ կհամատեղվի ստացած տեսական գիտելիքներն ու գործնական կարողունակությունները:

ՆԶՊ առարկայի ուսումնասիրության շրջանակներում ոչ միայն աշակերտների մեջ սերմանել հայրենասիրություն և հայապաշտպան քարոզչություն, նաև ծանոթացնել այս ոլորտում իրենց գործունեությունը իրականացնող և հայրենիքի պաշտպանության հարցում ոչ մի ակնթարթ չծուլացող ու պատրաստակամ ղեկավարության հետ, սա ևս լավ հնարավորություն կլինի երեխաներին զերծ պահել կենցաղային անիմաստ բամբասանքից և ավելի մոտեցնել մեր իրականությանը և ինչու չէ, նաև դրա մասնակիցը դարձնել:

Զարգացման ծրագրի բովանդակությունը

1. Հաստատության գործունեությունը
2. Իրավիճակի վերլուծություն, ուժեղ և թույլ կողմերը
3. Նպատակների և խնդիրների սահմանումը
4. Սահմանված խնդիրների և նպատակների իրականացումն ապահովող գործողությունների և միջոցառումների ժամանակացույցը
5. Պատասխանատուները
6. Արդյունքների գնահատման չափանիշները
7. Գործընթացի կազմակերպման համար անհրաժեշտ միջոցները և նյութատեխնիկական պարագաները
8. Ռիսկերը
9. Վերահսկողության մեխանիզմները
10. Ակնկալվող արդյունքները

Հաստատության գործունեությունը

«Երևանի Գ. Նժդեհի անվան հ. 161 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության (այսուհետ՝ Դպրոց) 2023-2028 թվականների զարգացման ծրագիրը մշակված է «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 12-րդ մասի 3-րդ կետի պահանջներին համապատասխան:

Դպրոցի զարգացման ծրագիրը հանրակրթական ուսումնական հաստատության ամենակարևոր ռազմավարական փաստաթուղթն է՝ հիմնված դպրոցի ներկայիս վիճակի վերլուծության, Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության ներկայացրած հանրակրթության զարգացման առաջնահերթությունների, դպրոցի համակազմի և համայնքի կարիքների բացահայտման, նորամուծությունների ներդրման վրա, ապագայի ցանկալի վերելքին հասնելու քայլերի և ակնկալվող արդյունքների ներկայացմամբ:

Զարգացման ծրագրի հիմքում ընկած է հանրակրթական ուսումնական հաստատությունում սովորող յուրաքանչյուր անհատի համար ստեղծել ապահով և գրագետ միջավայր, կրթել, զարգացնել և կատարելագործել նրա կարողությունները, դաստիարակել հայրենասեր, բարձր արժանապատվությամբ օժտված քաղաքացի:

Երևանի հ. 161 միջն. դպրոցը հիմնադրվել է 1973 թվականին ՀՍՍՀ լուսավորության մինիստրության հրամանով: Դպրոցն առանձնացել է հ.18 միջն. դպրոցից կից կառույցով և ներկայումս ունի երեք մասնաշենք: Դպրոցը առանձնանալուց հետո կոչվել է անգլերեն լեզվի թեքումով հ.161 միջնակարգ դպրոց: 1973թ. եղել է 2-10-րդ՝ թվով 27դասարան: 2001թ. Երևանի քաղաքապետի ապրիլի 18-ի հ. 3/4-1 հրամանով դպրոցը անվանակոչվել է Գարեգին Նժդեհի անվամբ:

2002թ. դեկտեմբերի 17-ին հաստատվել է դպրոցի կանոնադրությունը և գրանցվել Հայաստանի Հանրապետության պետական ռեգիստրի տարածքային բաժնում /վկ. 03Ա058021/: Հայաստանի Հանրապետության կառավարության 06.05.2010թ. հ. 575-Ն որոշմամբ դպրոցն ընդգրկվել է հիմնական դպրոցների ցանկում և իրականացնում է հիմնական պարտադիր կրթություն:

06.06.2006թ. համաձայն Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի թիվ 466-Ա/ք, թիվ 467-Ա/ք հրամաններով տրված լիցենզիաների՝ դպրոցին իրավունք է տրվել իրականացնելու կրթական հետևյալ ծրագրերը.

Հիմնական դպրոց – հիմնական ընդհանուր կրթության – 430 սահմանային տեղով

Տարրական դպրոց - հիմնական ընդհանուր կրթության – 430 սահմանային տեղով

Դպրոցի շենքային պայմանները նախատեսված են 1020 աշակերտի համար քաղաքաշինության նախագծային հզորության համաձայն՝ 3 մասնաշենքով:

Ներկայումս դպրոցն ունի 804 աշակերտ՝ 31 դասարանով և աշխատում է երկու հերթով դասասենյակների սակավ թվի պատճառով՝ հետագայում երկրորդ հերթի վերացման նախապայմանով:

Դպրոցում աշխատում է 81 աշխատող, որից՝ 68 ուսուցիչ:

ԻՐԱՎԻՃԱԿԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ	
Ուժեղ կողմեր	***Թույլ կողմեր***
1. Բարձրագույն կրթությամբ ուսուցիչների համակազմ:	1.Շենքային պայմանների արդի պահանջների անհամապատասխանություն:
2.Քաղաքացիական կրթության ներուժով մտահոգ ծնողական համայնք:	**2.** Սոցիալապես անապահով ընտանիքներ, արտագաղթ:
3.Սովորող, ուսուցիչ, ծնող կապի մեջ վստահության մթնոլորտ:	**3.** Նյութատեխնիկական բազայի ոչ լիարժեքություն:
4. Կամավոր ատեստավորումը հաջողությամբ հաղթահարած ուսուցիչներ, նաև նրանց հետագա թվի ավելացում:	**4.** Ուսուցիչների տեղեկատվության և հաղորդակցման տեխնոլոգիաների /ՏՀՏ/ հմտությունների արդյունքների տիրապետում:
5.Աշխատանքային կոլեկտիվի փոխհարաբերությունների և համագործակցային մթնոլորտի բարձր ցուցանիշներ, աշխատանքի նկատմամբ բարձր պատասխանատվություն:	**5.**Սոցիալապես անապահով ընտանիքների անտարբերությունը քաղաքացիական արժեքների և կրթության ձևավորման նկատմամբ:
6. Կրթության և դաստիարակության գործընթացը էլ ավելի մատչելի և համակարգված դարձնող մեթոդների կիրառում և դրանց իրականացման համար համապատասխան մեթոդական և դիդակտիկ նյութերով հագեցած դասասենյակներ:	6. Տարակարգ ունեցող ուսուցիչների սակավ թիվ:

7. Դպրոցում գործում է օտար լեզվի (անգլերեն, ռուսաց լեզու) խմբակներ, որոնց շնորհիվ աշակերտները արդեն իսկ վաղ տարիքից տիրապետում են անգլերեն լեզվին և հետագայում ունենում են ակնհայտ տարբերվող մակարդակ:	7. Շրջանավարտների խորհրդի բացակայություն:
8. ԿԱՊԿՈՒ աշակերտների հետ աշխատելու յուրահատուկ հմտություններ և պարբերաբար նոր ու ավելի հետաքրքիր ու մատչելի մեթոդների կիրառում:	8. Ոչ բոլոր ուսուցիչներն են տիրապետում ՀՊՉ-ին և դրանից բխող ծրագրային և մեթոդական փոփոխություններին:
9.Դպրոցն ունի ԲՄԹ-հոգեբան,ուսուցչի օգնականներ,բուժքույր, մանկավարժական խելացի, պատրաստակամ համակազմ	9.Նոր սերնդի էլեկտրոնային գրատախտակների անհրաժեշտություն
10.Հաստատությունն ունի վերանորոգված և կահավորված հանդիսությունների սրահ	10.Համավարակից հետո ուսման որակի ոչ լիարժեք վերականգնում
11.Դպրոցում առկա է բուժկետ, որտեղ աշակերտներից ցուցաբերվում է առաջին օգնություն	11. Տարբեր դպրոցների, կազմակերպությունների, գիտական ոլորտում բարեփոխումներին ուղղված կապերի բացակայություն:
12.Դպրոցում, 8-րդ դասարանցիներն արդեն հաջողությամբ ստեղծել են նախագծային ծրագրի մոդել և դա մեր հաջողության սկիզբն է	12. Ֆինանսական գործընկերներ ունենալու հավանականության ցածր տոկոս:
13.Ուսհաստատությունում տիրում է ջերմ և խաղաղ բարոյահոգեբանական մթնոլորտ և կիրառվում է աշակերտակենտրոն մոտեցում:	13. Մոտ ապագայում կրթական ռազմավարության քաղաքականությանն ուղղված և բոլոր պահանջներին համապատասխան բարեկարգ դպրոց ունենալու ոչ մեծ հավանականություն:
14.ԾԽ-ի կողմից տարվում են ակտիվ աշխատանքներ՝ ուսուցիչների հետ համագործակցելով, աշակերտների վարքի, ճիշտ դրսևորման, հաճախումների և դասերից ուշացումների հետ կապված հարցերի վերաբերյալ:	
15.Աշակերտների ակտիվ մասնակցությունը «Կենգուրու», «Ռուսական արջուկ», «Մեղու» մրցույթներին՝ ունենալով հաջողություններ:	
16.Ամենօրյա հետևողական աշխատանքներ աշակերտների բացակայությունների հոտ կապված:	

17. Պարբերաբար կատարվում են միջառարկայական ամուր կապեր ստեղծող և համագործակցային փոխադարձ դասալսումներ:	
18. Մանկավարժական աշխատողների միջև բարիդրացիական հարաբերություններ, հարգանքի մթնոլորտ, որով լավ օրինակ ենք ծառայում աշակերտների համար:	

Հնարավորություններ՝

- Դպրոցի ֆինանսական ծավալների ավելացում՝ խնայողությունների և աշակերտների թվի պահպանման միջոցով:
- Շահույթի ազատ մնացորդի առկայություն:
- Հովանավորների կողմից աջակցություն:
- Դպրոցում գործող ներառական կրթության գրագետ և ճիշտ կազմակերպում, բազմամասնագիտական թիմի ստեղծում, ժամանակ առ ժամանակ նրանց համար ինքնակրթությանն ուղղված դասընթացների կազմակերպում:

Հաշվետու ժամանակաշրջանի սպասվող վտանգները

- Ֆորսմաժորային իրավիճակ(անհաղթահարելի դժվարություններ)
- Արտաքին սպառնալիքներ, պատահարներ, աղետներ:
- Աշակերտների թվաքանակի նվազում:
- Համապատասխան մասնագետների բացակայություն:

ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

- Նորօրյա պահանջների իրականացում կրթության բնագավառում:
- Պետական քաղաքականության իրականացում, նորի և արդիականի արմատավորում:
- Հանրակրթության պետական չափորոշիչի, առարկայական չափորոշիչների և ծրագրերի բովանդակության պարտադիր նվազագույնի յուրացում:
- Ուսումնական ապահով, անվտանգ և հաճելի միջավայրի ապահովում:
- Կրթական ժամանակակից պահանջները բավարարող ուսումնանյութական բազայի ստեղծում:
- Տեղեկատվության և հաղորդակցման տեխնոլոգիաների /ՏՀՏ/ կիրառման միջոցով ուսուցման արդյունավետության բարձրացում:
- Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող /ԿԱՊԿՈՒ/ սովորողների ինտեգրում:
- Մանկավարժական համակազմի, մասնագիտական որակավորման՝ ուսուցչի տարակարգման թվի աճ, սովորողների կրթության որակի ապահովում:
- Ծնողական համայնքի հետ սերտ կապերի հաստատում, դաստիարակության գործընթացի արդյունավետ կազմակերպում:
- Ծնողների մասնակցության ապահովում սովորողների ուսուցման, դաստիարակության գործընթացին:
- Խորհրդակցական մարմինների գործունեության, ծրագրերի իրականացման հետևողականություն:
- Ըստ ՀՀ կառավարության որոշմամբ փոփոխություններ է կատարվել պետական հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի ընտրության կարգում և դա շատ կարևոր է կրթության ռամավարությունը ճիշտ կազմակերպելու դպրոցում սովորող երեխաների ուսման որակն ու առաջադիմությունը էլ ավելի բարձր մակարդակի վրա պահելու համար: Ստորև ուզում եմ ներկայացնել ուսհաստատության վերջին հինգ տարիներին աշակերտների կողմից գրանցած ուսման առաջադիմությունն ու որակը՝ նպատակ ունենալով ավելացնել այդ թվերը:



Վերոնշյալ բոլոր աշխատանքների և համախմբվածության արդյունքում այս թվերը կարող են լուրջ փոփոխությունների ենթարկվել՝ ակնկալելով ուսման քաղաքականությանն ուղղված մեծ մոտիվացիա, ձգտում, առողջ մրցակցություն, ավելին իմանալու, ավելի մեծ հաջողություններ գրանցելու ճանապարհ, որը կարող է ունենալ իր քարքարոտ և հիասթափեցնող դժվարությունները, բայց դա երբեք չպետք է նահանջելու պատճառ դառնալ, հակառակը, մանկավարժական ուժեղ համակազմի շնորհին յուրաքանչուր աշակերտ կունենա իր ինքնավստահության ու աշխատասիրության չափաբաժինը և կկարողանա բարձրանալ իր նպատակների սանդուխքով դեպի երազանքների իրականացում:

Մենք կունենանք խիզախ, դատող, նպատակասլաց, հայրենասեր սերունդ և հենց հանուն այս համատեղ նպատակի պետք է աշխատել առանց տրտնջալու և այն գիտակցումով, որ մեր յուրաքանչյուր խոսքից և մտքից է կախված անմեղ աչքերով մեր սիրելի աշակերտների ապագան:

ԾՐԱԳՐԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ



Դպրոցի զարգացումը պայմանավորված է կառավարման բոլոր օղակների միասնական արդյունավետ աշխատանքով: Դպրոցում առաջացած յուրաքանչյուր խնդիր պետք է առանձնացնել ըստ նպատակի կարևորության և դրանց լուծման համար կատարել նպատակաուղղված աշխատանք: Յուրաքանչյուր ոլորտի աշխատանք պետք է կազմակերպվի պլանավորված ժամանակացույցով, որոնք պետք է լինեն իրատեսական, դպրոցի պայմաններին համապատասխան և իրագործելի: Դպրոցի բոլոր օղակները պետք է վերահսկվեն օրենքով սահմանված չափանիշներով:

ԴՊՐՈՑԻ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ

ԴՊՐՈՑԻ ԱՌԱՔԵԼՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԸ

1. Ուսուցման և ուսումնառության արդյունավետ կազմակերպման միջոցով ձևավորել
   - համակողմանիորեն զարգացած
   - մասնագիտորեն կողմնորոշված
   - ազգային արժեքներ կրող
   - հայրենասեր
   - գլոբալիզացիայի մարտահրավերներին պատրաստ
   - համաշխարհային աշխատաշուկայում կողմնորոշվող և մրցունակ
   - մարդասիրության ոգով դաստիարակված, կոմպետենտ
   - համաշխարհային մշակույթին ծանոթ, հայրենասեր քաղաքացիներ

2.Դպրոցի ղեկավարությունը պետք է աջակցի դպրոցի հիմնական առաքելությանը

3.Դպրոցի կառավարման հետ առնչվելիս և ընկալելով դպրոցը որպես միջավայր և փորձագիտական կազմակերպություն՝ ի հայտ են գալիս որոշիչ հատկանիշներ:

4. Դպրոցի կառավարումը վերածվում է կառավարման մի ռազմավարության, որը խիստ տարբերվում է մեզ հայտնի կառավարման բոլոր ձևերից:

5. Ուսհաստատությունները ստեղծված են որպես կրթական, սոցիալական, փորձագիտական համատեքստ, որը գործում է որպես ազդեցիկ և աշխատանքային յուրովի բնույթ կրող համայնք:

6. Դպրոցի հիմնական տարրերն են՝ ողջ կազմակերպությունը, անհատը, հասարակությունը, ռեսուրսները, նպատակները, արդյունքները և գնահատումը:

Առաքելության իրագործման առկա ռեսուրսները

- Նորագույն տեխնոլոգիաների կիրառում որակյալ կրթություն ստանալու համար
- Սովորողի կրթական կարիքի գնահատում
- Սովորողի կրթական կարիքի բավարարում՝ տարբերակված ուսուցմամբ
- Օտար լեզուների խորացված ուսուցում
- Համայնքի հետ ակտիվ համագործակցություն

●Կրթություն բոլորի համար, որտեղ կարող են սովորել և՛ սովորական, և՛ օժտված, և՛ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաները

●Սովորողների տեղեկացվածությունը հայաստանյան և համաշխարհային տեղեկատվական դաշտից

●Մասնակցային և համագործակցային աշխատանք՝ դպրոց-ծնողական- համայնք սերտ համագործակցությամբ

●Աշակերտների մտավոր և ֆիզիկական զարգացման բավարար պայմաններ

Սովորողների արժեհամակարգի ձևավորում

Դպրոցի ռազմավարությունը համատեքստային գործունեությունն է, որը հիմնված է անհատի և շրջակա միջավայրի միջև հավասարակշռության պահպանմանը: Շատ հետաքրքիր է դպրոցի կառավարման համատեքստային մոդելը, որտեղ տնօրենն ամեն օր ակտիվ աշխատում է, քանի որ գտնվում է կրթության ռազմավարության կենտրոնում և շփվում է կրթության ռազմավարական մասնիկ կազմող մնացած օղակների հետ՝ աշակերտներ, ծնողներ, շահագրգիռ կողմեր, անձնակազմ և տարածքային ղեկավար թիմ;

Դպրոցի առաքելությունը պետք է նպաստի սովորողի կրթական կարիքների բավարարմանը՝ սահմանելով կրթության որակի բարձրացման և ազգային դպրոցի գլխավոր նպատակի իրագործման ուղիները:

Առաքելությունն իրատեսական դարձնելու գրավականներն են՝

●Փորձառու մանկավարժական համակազմը

●Մասնակցային և համագործակցային աշխատանքը

● Համընդհանուր ներառական կրթության իրականացումը

●Կրթության որակի բարելավմանն ուղղված շարունակական միջոցառումները՝ վերապատրաստումներ, հանդիպումներ տարբեր մասնագետների հետ, ներդպրոցական միջավայրից դուրս սեմինար-դասընթացներ

●Կրթության կազմակերպման մթնոլորտի շարունակական բարելավումը

Դպրոցի ակտիվ ներգրավվածությունը սոցիալ-մշակութային միջոցառումներում

●Արտադասարանական միջոցառումներում սովորողների ներգրավվածությունը (ճանաչողական այցեր, մասնագիտական կողմնորոշման նպատակով հանդիպումներ, բանավեճեր, քննարկումներ, ինտելեկտուալ խաղեր, այցեր դեպի թանգարաններ,

պատմամշակութային արժեքներ ձևավորող էքսկուրսիաներ և այլն)

●Դպրոցում ձևավորված ավանդույթների պահպանման և գրագետ ներկայացման գործընթաց

●Խրախուսման հետաքրքիր միջոցները. «Տարվա լավագույն աշակերտ», «Տարվա լավագույն գեղագիտական աշխատանք», «Տարվա ամենապարտաճանաչ աշակերտ» շնորհակալագրեր՝ Օլիմպիադաներին լավագույն արդյունք գրանցելու համար, դպրոցական միջոցառումներին ակտիվ մասնակցելու համար, դպրոցից դուրս՝ սպորտային և մշակութային ոլորտներում ունեցած հաջողությունների համար: «Լավագույն ընթերցող»,«Լավագույն ասմունքող», «Լավագույն բաց դաս», «Լավագույն ուսուցիչ», «Լավագույն միջոցառում», Սովորողների մասնակցությունը միջազգային և հանրապետական մրցույթներին, օլիմպիադաներին, նախագծերին:

●Դպրոցի կառավարման ռազմանավության մեջ, գործնականում, տնօրենի կապերը, օրինակ, դպրոցի գործակալության և կրթական խորհրդի, այսինքն՝ այլ կերպ ասած՝ անմիջական գործող միջավայրից դուրս գտնվող սուբյեկտների հետ: Առաջնորդությունը կապում է նաև մակրոհամակարգին պատկանող հասարակական և մշակութային գաղափարախոսությունները: Գործնականում, հետևաբար, օրենքներ, կանոնակարգեր, քաղաքական համակարգեր և կազմակերպություններ, սակայն, ըստ ուսումնասիրության, դպրոցի ղեկավարության վրա ամենաշատը ազդում են տեղական մակարդակում ընդունված որոշումները, երկրորդը՝ ազգային որոշումները և ամենաքիչը՝ դպրոցի մակարդակով տնօրենի կողմից ընտրված որոշումները: Այստեղից կարելի է եզրակացնել, թե որքան կարևոր է քաղաքապետարանի գործունեությունը դպրոցի կառավարման համար, բազմաստիճան կազմակերպչական միավորի կառավարումը դժվար է, քանի որ յուրաքանչյուր մակարդակ պետք է հաշվի առնել:

●Դպրոցի ղեկավարությունն ունի հինգ ընդհանուր հատկանիշ՝ բարոյական նպատակ, փոփոխությունների գրագետ ըմբռնում, գիտելիքների ստեղծում, կապերի ստեղծում և միասնության ձևավոնում: Այնուամենայնիվ, դպրոցի կառավարումը մեծ չափով չի կարող համեմատվել, օրինակ, բիզնես կյանքի կառավարման հետ, քանի որ դպրոցի ղեկավարությունը պետք է հաշվի առնի իր համատեքստը և սոցիալապես պարտադրված պահանջները: Բնորոշ դպրոցի կառավարման համար, ի թիվս այլ բաների, դրված նպատակների իրագործման ապահովումն է: Նպատակները և արժեքները սահմանվում են, երբ կազմակերպության ներքին գործառնությունների սահունությունն ու արդյունավետությունը լավ համակարգված են: Դպրոցի նպատակները հիմնված են

արժեքների վրա, որն էլ հիմնված է արժեքային համակարգի նպատակային կառավարման վրա: Հասարակության փոփոխություններին հարմարվելը և դրանց կանխատեսումը դպրոցի կառավարման ևս մեկ կարևոր մասն է: Փոփոխությունների կառավարման հայեցակարգն օգտագործվում է հասարակության փոփոխություններին հարմարվելու համար:

●Այնուամենայնիվ, դպրոցի կառավարումը միայն նպատակներ սահմանելը, հասնելն ու պլանավորելը չէ: գործունեությունը նաև խիստ կապված է աշխատավոր համայնքի համար բարենպաստ պայմանների ստեղծման հետ: Դրա համար օգտագործվում է մարդկային հարաբերությունների մենեջեր հասկացությունը: Որպես մարդկային հարաբերությունների մենեջեր՝ տնօրենը դրական մթնոլորտ է ստեղծում աշխատանքային համայնքում և աջակցում է յուրաքանչյուր ուսուցչի անհատական մասնագիտական աճին:

●Դպրոցի կառավարման ոլորտներն են արժեքների կառավարումը, փոփոխությունների կառավարումը, անձնակազմի կառավարումը, ընդհանուր կառավարումը, վարչական ու ֆինանսական կառավարումը: Մանկավարժական կառավարումը կապված է կառավարման բոլոր ոլորտների հետ այնպես, որ մանկավարժական տեսանկյունը պետք է նկատի ունենալ կառավարման բոլոր ասպեկտներում: Մանկավարժական կառավարման կենտրոնում երեխան է՝ աշակերտը, ով հասնդիսանում է ողջ դպրոցի գործունեության առանցքը: Կառավարման բոլոր ոլորտները փոխկապակցված են: Արժեքի կառավարումը, մյուս կողմից, պտտվում է դրա շուրջը, քանի որ արժեքի կառավարումը կառավարման միայն մեկ ասպեկտ չէ, այլ կապված է բոլորի հետ գործողության մեջ:

ԽՈՐՀՐԴԱԿՑԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐ

Համաձայն հաստատության Կանոնադրության՝ կրթական գործունեության արդյունավետ կազմակերպման, ինչպես նաև զարգացման ծրագրերին աջակցելու և համայնքի հետ արդյունավետ համագործակցություն ապահովելու նպատակով հաստատությունում գործում են խորհրդակցական մարմիններ։



ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

Հաշվետու ժամանակաշրջանում յուրաքանչյուր ուսումնական տարվա՝ մանկավարժական խորհրդի օգոստոսյան առաջին նիստին սահմանված կարգով

- **ձևավորել** հաստատության մանկավարժական խորհուրդը 1 /մեկ/ ուսումնական տարի ժամկետով,
- **ընտրել** մանկավարժական խորհրդի նիստերի մշտական քարտուղար և հաստատել իր աշխատակարգը,
- **քննարկել** հանրակրթության պետական չափորոշչի պահանջների համաձայն՝ հանրակրթական հիմնական ծրագրերի իրագործման հարցերը՝ սովորողների նախասիրություններին ու ընդունակություններին համապատասխան, ապահովելով նրանց կյանքի և առողջության պահպանումը,
- **քննարկել** ուսուցման բովանդակության, սովորողների ուսումնառության որակի հետ կապված հարցերը /

«Մանկավարժական գործունեությունը մարդկանց, իրերի ու գիտելիքների համապարփակ կառավարումն է, որը հնարավորություն է ընձեռում օգտագործել համայնքը, տարբերություններն ու նորարարությունները», հետևաբար, մանկավարժական գործունեությունը նպատակաուղղված ղեկավարություն է, որը տեղի է ունենում համագործակցությամբ և համագործակցության մեջ, որտեղ առաջնորդի խնդիրն է հիշեցնել ընդհանուր նպատակի և տեսլականի գոյության մասին: Տնօրենը՝ որպես դպրոցում կրթության ռազմավարության համակարգող, նպաստում է աշակերտների կրթական մակարդակի աճին և ուսմանը ուսումնական ծրագրի շրջանակներում: Մանկավարժության ոլորտում տնօրենը և՛ ուսուցիչ է, և՛ դաստիարակ, և՛ ղեկավար:Մանկավարժական առաջնորդությունը հայեցակարգել է ստորև ներկայացված օրինաչափության համաձայն. Կենտրոնում մանկավարժական համակազմն է՝ շրջապատված կոմպետենցիաների կառավարմամբ. Գիտելիքների կառավարում և, առաջին հերթին, կատարողականի կառավարում: Իրավասությունների կառավարումը վերաբերում է ուսուցիչների, կազմակերպության և իրենց, ինչպես նաև զարգացմանն աջակցելը: Գիտելիքի կառավարումը վերաբերում է տեսլականների ու ռազմավարությունների նախապատրաստմանը և շրջակա հասարակության կրթական քաղաքականությանը:

ԱՇԱԿԵՐՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

●Աշակերտական խորհուրդը սովորողների ինքնավարության և ինքնակառավարման լիազորություններով օժտված ներկայացուցչական մարմին է, որի գործունեության հիմնական սկզբունքներն են՝ կամավորությունը, սովորողների իրավահավասարությունը, կառավարման կոլեգիալությունը և հրապարակայնությունը:

●Աշակերտական խորհուրդը ձևավորվում է հաստատության 6-12-րդ (հիմնական դպրոցի համար՝ 6-9-րդ, ավագ դպրոցի համար՝ 10-12-րդ) դասարանների դասարանական ժողովներում՝ փակ, գաղտնի քվեարկությամբ ընտրված մինչև երկու ներկայացուցիչներից, դասարանական ժողովներից հետո՝ 10-օրյա ժամկետում, սակայն ոչ ուշ, քան մինչև տվյալ ուստարվա սեպտեմբերի 20-ը:

●Խորհրդակցական ձայնի իրավունքով մասնակցում է հաստատության կառավարման խորհրդի և մանկավարժական խորհրդի նիստերին՝ սովորողներին վերաբերող ուսուցման բովանդակության, գիտելիքների յուրացման որակի, նրանց հետ տարվող արտադասարանական և արտադպրոցական աշխատանքների կազմակերպման հարցերի քննարկումներին:

●Կարող է ստեղծել մանկապատանեկան ակումբներ և աջակցում է դրանց աշխատանքների կազմակերպմանը:

●Աշխատանքներ է տանում սովորողների կարգապահության, հաճախումների և ուսումնական առաջընթացի բարելավման ուղղությամբ.

●Իրականացնում է դպրոցի և սույն կանոնադրություններից բխող այլ լիազորություններ:

ԾՆՈՂԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

●Դպրոցի խորհրդի ծնող ներկայացուցիչների պարբերական հանդիպումների կազմակերպում ծնողխորհրդի անդամների հետ:

● Ծնողական խորհրդի կողմից առաջարկությունների պատրաստում և ներկայացում դպրոցի խորհրդի քննարկմանը:

●Ապահովել ծնողների ներգրավումը սովորողների արտադպրոցական և արտադասարանական դաստիարակությանը:

●Աջակցել միջոցառումների կազմակերպմանը:

●Բացահայտել աշակերտ-աշակերտ, աշակերտ-ուսուցիչ կոնֆլիկտները և աջակցել այդ կոնֆլիկտների լուծմանը:
●Աջակցել շնորհալի երեխաների բացահայտման գործընթացին:
●Աջակցել աշակերտների հետաքրքրությունների և նախասիրությունների բացահայտմանը:
●Աջակցել խմբակների աշխատանքներին:
●Գնահատել դպրոցի ուսումնադաստիարակչական գործունեությունը:
●Ծնողների շրջանում անցկացնել հարցումներ:
●Աջակցել աշակերտների հանգստի ու ժամանցի կազմակերպմանը:
●Ծնողական համայնքին մասնակից դարձնել դպրոցի գործունեությանը:
●Կազմակերպել քննարկումներ և կլոր սեղաններ ծնողների, աշակերտների և ուսուցիչների մասնակցությամբ:
●Աջակցել դպրոցին պարտադիր կրթության իրականացնելու հարցում:
●Աջակցություն ցուցաբերել դպրոցին պարբերաբար բացակայող աշակերտների խնդրի լուծման հարցում:
●Մասնակցել ուսուցչի կողմից աշակերտի պարտադիր նվազագույն գիտելիքների գնահատման գործընթացին:
●Աջակցել դպրոցի ուսումնանյութատեխնիկական բազայի հարստացմանը:
●Բացահայտել հնարավոր հովանավորներին և նրանց հետ հաստատել կապեր:
●Ներկայացնել առաջարկներ դպրոցի նյութատեխնիկական բազան հարստացնելու համար:
●Մասնակցել սոցիալապես անապահով երեխաներին օգնություն ցույց տալու գործին:
●Ապահովել երեխայի իրավունքների պաշտպանությունը դպրոցում:
●Բացահայտել երեխաների իրավունքների խախտման դեպքերը:
●Կազմակերպել սեմինարներ ծնողների համար:
●Ապահովել ծնողներին տեղեկատվությամբ և խորհրդատվությամբ:
●Ծնողներին իրազեկել կրթության ոլորտում իրականացվող փոփոխություններին:
●Ծնողական խորհուրդը իր աշխատանքների մասին հաշվետվությամբ ներկայանա ծնողական համայնքին:
●Վերլուծել տնօրենի ներկայացրած դպրոցի գործունեության մասին հաշվետվությունը և ներկայացնել առաջարկություններ:

Պատասխանատուները

Կազմակերպչական աշխատանքներ

Խորհրդակցական մարմինների արդյունավետ համագործակցություն և սովորողների առավելագույն ընդգրկվածությունը կազմակերպվող արտադպրոցական, արտադասարանական, վարչական շրջանի և քաղաքային միջոցառումներին.

- Խթանել, ուսուցչական և ծնողական համայնքների փոխգործունեությունը:
- Աշխատանքի թափանցիկության և պարբերաբար հաշվետվության ապահովում

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ՝

- Ծնողական՝ընդհանուր, դասարանական ժողովների ժամանակ զեկույցներով հանդես գալ՝ ներկայացնելով ծնողներին անհրաժեշտ տեղեկություններ դպրոցի ուսումնադաստիարակչական գործունեության վերաբերյալ:
- Դպրոցի նկատմամբ վստահությունը գնահատելու համար կազմակերպել հարցախույզ մանկավարժների, աշակերտների, ծնողների շրջանում և իրականացնել ներքին գնահատում:
- Ծնողներին մասնակից դարձնել սովորողների կրթության և դաստիարակության գործընթացին
- Ապահովել առողջ համագործակցային աշխատանքային հարաբերություններ աշակերտ-ուսուցիչ, աշակերտ-աշակերտ, ծնող-ուսուցիչ օղակներում:
- Շարունակաբար կազմակերպել մշակութային, գրական, բնապահպանական, պատմահայրենասիրական միջոցառումներ, վիկտորինաներ, աշակերտական կոնֆերանսներ, բանավեճի կլոր սեղաններ, գրքի քննարկումներ
- Սովորողների հասարակական կյանքին ինտեգրում, նրանց մոտ ազգային և մշակութային արժեքների ձևավորում և պահպանման հմտություններ
- Բացահայտել շնորհալի սովորողներին, կազմակերպել ցերեկույթներ, միջոցառումներ, հայրենասիրության դասեր:

Կադրային ներուժ

Կրթական պահանջմունքները բավարարող ուսումնական միջավայրի ապահովում և մանկավարժական համակազմի մասնագիտական որակավորման բարելավում, կատարելագործում.

- Դպրոցի նյութատեխնիկական բազայի հարստացում:
- Մանկավարժների պատրաստվածության և ինքնակրթության մակարդակի բարձրացում, ժամանակակից դասավանդման մեթոդների տիրապետում և կիրառում, մասնագիտական հնարավորությունների ընդլայնում՝ տարակարգ ստանալու անհրաժեշտություն:

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ՝

- Դպրոցը համալրել նոր էլեկտրոնային գրատախտակներով:
- Բնագիտական առարկաների կաբինետները հարստացնել լաբորատոր սարքավորումներով:
- Ստեղծել ուսումնական նյութերի և օժանդակ գրականության էլեկտրոնային գրադարան:
- Համագործակցել ՏՀՏ կիրառման փորձառություն ունեցող դպրոցների հետ: Ստեղծել միջավայր և հնարավորություն լավագույն փորձի փոխանակման համար:
- Համադրել ավանդական և արդիական դարձած ուսուցման մեթոդները և ապահովել որակյալ ուսուցում
- Կապ հաստատել մայրաքաղաքային և մարզային կրթական հաստատությունների միջև:
- Մանկավարժական առաջավոր փորձի յուրացման նպատակով իրականացնել համապատասխան աշխատանքներ /փոխադարձ դասալսումներ, սեմինարներ և այլն/:
- Կազմակերպել ուսուցիչների մասնագիտական գիտելիքների, աշխատանքային ունակությունների կատարելագործմանը նպաստող միջոցառումներ: Ուսուցիչների ատեստավորման ապահովում:
- Կրկնության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող աշակերտների համար ստեղծել հագեցած դիդակտիկ նյութերով աշխատասենյակ, որտեղ հնարավոր կլինի

կազմակերպել առավել արդյունավետ աշխատանքներ և հնարավորություն տալ աշակերտներին դասից ձեռք բերել նոր հմտություններ:

Նյութատեխնիկական հիմք

Ուսումնական բարեկեցիկ, անվտանգ միջավայրի ապահովում.

- Դպրոցը դարձնել անվտանգ, բարեկեցիկ, ֆիզիկապես հասանելի յուրաքանչյուր սովորողի համար:

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ՝

- Դպրոցի տարբեր հարթակներում ապահովել սովորողների անվտանգությունը:
- Սանհանգույցներում սանիտարահիգիենիկ պայմանների ապահովում /մաքրություն, դեռատիզացիա, վերանորոգում/:
- Դասասենյակների և առարկայական կաբինետների վերանորոգում և արդիականացում:
- Դպրոցի մարզահրապարակի և բակի խնամվածություն:
- Բուժկետի հարդարում և կահավորում:
- Կոսմետիկ վերանորոգում իրականացնել դպրոցի որոշ դասասենյակներում, քանի որ վերջին հինգ տարիների ընթացքում կարևոր շինարարական աշխատանքներ են կատարվել տանիքներ, հանդիսությունների դահլիճ, աստիճանները և դրան կից բազրիքները:
- Աշակերտների առողջության պահպանման նկատառումներից ելնելով ներդնել մեր ուժերը և իհարկե թույլտվության և օգնության միջոցով ստեղծել այնպիսի բուֆետ, որտեղ դպրոցի աշակերտները կկարողանան ստանալ ժամանակակից բոլոր նորմերին համապատասխան սնունդ:

ՆԵՐՔԻՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ

Դպրոցում իրականացվող ուսումնադաստիարակչական աշխատանքների ամենամյա հաշվետվություն

- Սովորողների ուսուցման և դաստիարակության նորանոր մեթոդների կիրառում:
- Ներդպրոցական վերահսկողության կազմակերպում, կարգապահության և համագործակցային փոխհարաբերությունների ամրապնդում:

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ՝

- Ապահովել արտակարգ ընդունակություններ դրսևորած աշակերտների մասնակցությունը օլիմպիադաներին, մրցույթներին, միջոցառումներին:
- Դասակարգել և զարգացնել ուսուցիչների դասավանդման ժամանակակից մեթոդների կիրառման կարողություններն ու հմտությունները:
- Ուսուցիչների մեջ ձևավորել բարձր պատասխանատվություն, սեփական աշխատանքի արժևորում:

ՏՀՏ և տեղեկատվության ապահովում՝

Կրթության որակի շարունակական բարձրացում.

- Կրթության մատչելիության ապահովում, սովորողների կարողություններին և ձգտումներին համապատասխան կրթական չափորոշիչների յուրացում, որակյալ կրթության ապահովում:

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ՝

- Ներդնել սովորողների գործնական հմտությունների զարգացմանն ուղղված ուսուցման ժամանակակից մեթոդներ՝ ապահովելով միջառարկայական կապը:
- ՈՒսուցման գործընթացում կիրառել տեղեկատվական և հաղորդակցության ժամանակակից տեխնիկա
- Ապահովել ուսպլանի համապատասխանեցումը սովորողների պահանջներին, կարողություններին և համայնքի պահանջներին
- Կատարել սովորողների ուսումնառության արդյունքների շարունակական վերլուծություն գիտելիքների որակական գնահատման զարգացում

- Ստեղծել պայմաններ, պարբերաբար ստուգել աշակերտների ընթերցասիրության մակարդակը, հայերենին լիարժեք տիրապետելը և կապը գրադարանի հետ

Արդյունքների գնահատման չափանիշները

Մեր կյանքում չկա մի բնագավառ, որտեղ մենք կհասնենք հաջողության առանց ջանք գործադրելու: Հաջողության գրավականներից մեկը հանդիսանում է այն, որ կարողանանք մեր առջև դնել նպատակ և վստահ ու խելացի քայլերով հասնենք հաջողության՝ օգտվելով սահմանված այն նորմերից ու կանոններից, որոնք ավելի մատչելի և խելամիտ կդարձնեն մեր քայլերը: Այսօր մենք ունենք շատ խնդիրներ և ցավոք դրանց հիմնական պատճառը հանդիսանում է այն, որ շատ դժվարությամբ ենք մեր կյանքում ընդունում յուրաքանչյուր նոր տեղեկատվություն, խնդիրներ, հետևաբար հաջողության հասնելու ճանապարհին պետք է հաղթահարել հենց այդ մտածելակերպը, պետք է հստակ հասկանալ, որ դարաշրջանը, որում մենք ապրում ենք, ամեն ակնթարթում փոփոխությունների է ենթարկվում, ավելի ժամանակակից է դառնում, ավելի հետաքրքիր, ավելի նոր ու տեղեկատվությամբ լի:

Մենք կհասնենք ցանկալի հաջողության միասին, ունենալով մեծ թվով ատեստավորում անցած մանկավարժներ, ովքեր օր օրի պատրաստ կլինեն էլ ավելի հստակ քայլերով իրենց աշակերտներին տանել դեպի նոր հաղթանակներ, մենք պետք է վառ օրինակ դառնանք մեր սաների համար, պետք է մեր գիտելիքով ու հմտություններով հնարավորություն տանք աշակերտներին իրենց կարողունակությունների ծավալը մեծացնել և միշտ ձգտել ավելիին, երբեք ետ չնայել, երբեք չնահանջել, միայն առաջ շարժվել և դառնալ ապագայի հզոր մասնագետներ, հայրենիքի համար պիտանի ներուժ՝ ովքեր պատրաստ կլինեն մասնակցել ամուր հիմքի վրա կամգնած իրենց հայրենիքի կայացման գործընթացին:

Մենք առանձնացնում ենք ներքին և արտաքին գնահատման ձևերը, որոնից յուրաքանչյուրը կարևոր նշանակություն ունի մեր կրթության և դաստիարակության գործունեության համար:

Ներքին գնահատման արդյունքում քննարկում և ամփոփում են այն բոլոր կետերը, որոնք կարևոր են կրթական գործընթաղի իրականացման համար. Ապահով, անվտանգ շենքային պայմաններ, բարեկարգված և մաքուր բակ ու դասասենյակներ, անվտանգ աստիճաններ և հարակից բազրիքներ, շենքի հարմարվածության մակարդակը ԿԱՊԿՈՒ

աշակերտների կրթության, դաստիարակության և ապահով տողաշարժման համար, անհրաժեշտության դեպքում ապահով ապաստարանների առկայություն, համապատասխանաբար ելքերի առկայություն և աշակերտների կողմից այս մասին տեղեկացվածություն: Շատ կարևոր կետերից է նաև ջեռուցման համակարգը, դրանից ճիշտ օգտվելու և զգուշավորության կանոնների տիրապետում, ուսումնանյութական բազայի համապատասխան առկայություն: Այս աշխատանքներին իրականում պետք է կատարվեն ամեն օր, հետևողականության ու առավել մեծ ուշադրության շնորհիվ կխուսափենք ավելորդ խնդիրներից և կկենտրոնանանք ուսուցման գործընթացի բարելավմանն ուղղված տարբեր հնարների և մեթոդների կիրառմանը:

Արտաքին գնահատումը կատարվում է ելնելով ներքին գնահատման արդյունքներից և բոլոր այս բարենպաստ ու պահով պայմանների միջոցով հետագա անելիքների մատչելիությունն պահովելով:

ԴՊՐՈՑԻ ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԾՐԱԳՐԻ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ

Դպրոցի ֆինանսավորումը կատարվում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից ըստ իրականացվող հանրակրթական ծրագրերի՝ կախված սովորողների թվաքանակից:

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի 18.12.2017թ. N 665-Ն-ի և Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 27.12.2017թ. N1532-Ն <<2018 թվականից ըստ աշակերտների թվի ֆինանսավորման բանաձևի գործակիցների մասին>> համատեղ հրամանի: Դպրոցի բյուջեն հաշվարկվում է հետևյալ բանաձևով.

$$ԸԳ = (ՍԹ • ՍԳ) + ՊԳ + (ՏՍԹ • ԱՕք\ k_1 • ՄՆԳ) + (ՄՍԹ • k_2 • 0.1 • ՍԱԴԳ)$$

ԸԳ – ընդհանուր գումար

ՍԹ – սովորողների թիվ

ՍԳ – մեկ սովորողին հատկացվող տարեկան գումարը = 124000 դրամ

ՊԳ - պահպանության ծախսերի Ա + Բ = 2.844.000 ֆոնդ + 19000000 դրամ / 301-ից ավել սովորող ունեցող դպրոց, որտեղ՝

Ա–ն ոչ ուսուցչական անձնակազմի աշխատավարձի տարեկան ֆոնդը - 2844000,

Բ-պետության սահմանած գումարը - 19000000

ՏՍթ – տարրական դասարանում սովորողների միջին տարեկան թվաքանակ /տարեսկզբին/

ԱՕք-Աշխատանքային օրերի քանակը – 168

ՄՆԳ – սննդի մեկ օրվա գումար

ՄՍթ –միջին դասարանում սովորողների թիվը ուստարվա սկզբին /սեպտեմբեր/

Բանկաձևային թիվ – 0.1

ՍԱԴԳ – սոց.անապահով ընտանիքների սովորողների դասագրքերի գումար – միջին դպրոց /5-9/ =5555.6դրամ, ավագ դպրոց / 10-12/ = 6326.7դրամ

Տարրական դասարանի համար գործակից (1-4)՝ k_1 =0.8097

Միջին դասարանի համար գործակից (5-9)՝ k_2= 1.1255

Տիրապետում եմ 2023թ. Սեպտեմբերի 1-ից դպրոցների ֆինանսավորման նոր բանաձևին:

1. **Միջոցներ լրացուցիչ ֆինանսավորման համար**.
   Բացի բյուջեից դպրոցի ֆինանսական միջոցները կարող են լրացվել հետևյալ ձևով.

- Արդյունավետ դարձնել <<Օգնի՛ր դպրոցիդ>> կայքի գործունեությունը,
- Մասնակցել տարբեր դրամաշնորհային մրցույթների,
- Կազմակերպել արտադասարանական, գեղագիտական, սպորտային խմբակների հնարավոր ձեռնարկատիրական գործունեություն
- Օրենսդրությամբ չարգելված այլ աղբյուրներից

2.**Արտաբյուջետային միջոցներից ստացված և տնտեսված գումարները նպատակառուղղել.**

- Դպրոցական գույքի ձեռքբերմանը
- Համակարգչային, էլեկտրոնային տեխնիկայի ձեռքբերմանը
- Էլեկտրոնային գրատախտակների ձեռքբերմանը, որը հնարավոր կլինի իրագործել համապատասխան մարմինների անմիջական օգնությամբ:
- Աշխատողների, աշակերտների խրախուսման ֆոնդին

- Դասասենյակների վերանորոգման
- Ներքին հարդարման աշխատանքներին
- Մարզադահլիճի վերանորոգման աշխատանքներին

Բոլոր գործընթացները անցկացնել թափանցիկ

ԴՊՐՈՑԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՌԻՍԿԵՐԸ

- Դպրոցի ֆինանսական սահմանափակ հնարավորություններ
- Դպրոցի նյութատեխնիկական բազայի ոչ բավարար հագեցվածություն
- Ծնողական համայնքի կողմից դպրոցի գործունեության մասնակցության պասիվություն
- Դպրոցի կողմից կատարած աշխատանքների հաշվետվության մեխանիզմների թերացում:
- Շրջանավարտների խորհրդի բացակայություն, որը բավականին դրական կարող է ազդել դպրոցում իրականցվող գործընթացների վրա:

Ռիսկերի ազդեցության նվազեցմանն ուղղված գործողություններ

- Սովորողների թվաքանակի ավելացում
- ԿԱՊԿՈՒ աշակերտների ուսման գործընթացի համար բոլոր անհրաժեշտ պայմանների ապահովում:
- Դասարանների կոմպլեկտավորում ուսպլանով սահմանված թվաքանակով
- Ֆինանսական մուտքերի և դրանց փոփոխման կանխատեսում
- Եկամուտների համապատասխան ծախսերի ճիշտ պլանավորում
- Դպրոցի գործունեության թափանցիկություն ծնողական համայնքի, ներքին գնահատման հրապարակայնություն
- Համագործակցություն տարբեր կազմակերպությունների հետ

ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԸ

- Դպրոցի խորհրդի կողմից տարեկան առնվազն 1 անգամ, ուստարվա աշխատանքային ծրագրում ընդգրկված դպրոցի զարգացման ծրագրի դրույթների կատարողականի հաշվետվության քննարկում
- Կառավարման խորհրդի մասնակցությունը տնօրենության կողմից դպրոցի զարգացման ծրագրի արդյունքների գնահատում

Յուրաքանչյուր ուսումնական տարվա համար զարգացման ծրագրից բխող ուսումնադաստիարակչական աշխատանքների, ֆինանսատնտեսական գործողությունների կատարողականների հաշվետվությունների հրապարակայնություն:

ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

Սույն զարգացման ծրագրով նախատեսված է հնգամյակում (2023-2028թթ.) ակնկալում ենք հետևյալ արդյունքները.

- Աշակերտ-ուսուցիչ, աշակերտ-ծնող, ծնող-ուսուցիչ, աշակերտ-համայնք, դպրոց-Շենգավիթ վարչական շրջան փոխհարաբերությունների ամրապնդում
- Դպրոցի վարկանիշի և ուսուցչի հեղինակության բարձրացում,
- Դպրոցի ուսումնանյութական բազայի հարստացում,
- Աշակերտների կրթության որակի էական բարելավում,
- Արտադասարանական խմբակներում սովորողների զգալի մասի ընդգրկում,
- Ուսուցիչների ատեստավորումների արդյունքում դասավանդող կադրերի որակական, կարողությունների բարձրացում, տարակարգ ունեցող ուսուցիչների թվի ավելացում,
- ՏՀՏ-ի կիրառության ընդլայնում,

- 2023թ.-ից սկսած ուսհաստատությունում սկսելու ենք իրականացնել ուսուցիչների համակարգվածությամբ և աշակերտների անմիջական մասնակցությամբ նախագծային ծրագրերի իրականացումը, հետևաբար կներդնենք մեր ուժերն ու հնարամտությունները այդ գործընթացն ավելի հետաքրքիր, նպատակային և պիտանի դարձնելու համար:
- 2023-2028թթ. շարունակաբար ավարտին հասցնել դպրոցի կոսմետիկ նորոգման աշխատանքները: Ստեղծել Հանրակրթության Պետական չափորոշչում պահանջվող բոլոր նորմերին համապատասխանող կրթության և դաստիարակության գործընթաց:
- 2023թ. Ունենալ կամավոր ատեստավորում անցած ուսուցիչներ
- 2023թ. ԿԱՊԿՈՒ աշակերտների կրթության գործընթացը արդյունավետ դարձնող միջոցներ
- 2023թ. Դպրոցում ավելացնել տարակարգ ունեցող մանկավարժների թիվը
- 2023թ. բակի կանաչապատման ապահովման համար աշխատանքներ
- 2023թ. ֆիզկուլտդահլիճը վերանորոգել և հագեցնել անհրաժեշտ պարագաներով
- 2024թ. իրականացնել և ունենալ վերանորոգված դասասենյակներ՝ հատուկ ուշադրություն դարձնելով մանրահատակին
- 2024թ. Մեր դպրոցի համար հատկանշական և բոլորից առանձնացնող օտար լեզվի (անգլերեն) դասագրքերի վերանայում և նոր ժամանակների կրթությանը համապատասխան դասագրքերի մեկնարկ
- 2024-2025թ. ուստարում փորձել իրականացնել չինարենը՝ որպես օտար լեզու դպրոցում ուսումնասիրելու գաղափարը՝ օգտվելով օգնության և աջակցության հնարավոր աղբյուրներից:
- 2026թ. իրականացնել և ունենալ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների գրագետ և հասանելի կրթությունն ու դաստիարակություն ապահովող աշխատասենյակ, որը հագեցած կլինի ժամանակակից անհրաժեշտ ու նպատակային նյութատեխնիկական բազայով
- 2026թ. Հաշվի առնելով դպրոցում հոգեբանի մասնագիտական կարևորությունը աշակերտների վարքի դրսևորման, հույզերի կառավարման և դասապրոցեսին լիարժեք մասնակցության գործընթացում՝ մասնագետի լիարժեք աշխատանքի համար ստեղծել մերօրյա պահանջները բավարարող հարմարավետ, հագեցած և ապահով աշխատասենյակ:

- 2027թ. հնարավորինս ունենալ հիմնանորոգված դպրոց, լիցենզավորման պարտադիր պահանջներին և պայմաններին բավարարող դպրոցական շենք, վերանորոգված դասասենյակներ, կահավորված կաբինետներ, լաբորատորիաներ, արհեստանոց, մարզադահլիճ, սարքավորումների, նյութերի, անհրաժեշտ գույք և գրադարանային տեղեկատվական համակարգի բարձր հագեցվածություն:
- 2028թ. Կրթության ու դաստիարակության գործընթացի կազմակերպման համար բոլոր հնարավոր պայմանները, որոնք արդյունավետ և նպատակային կդարձնեն դասապրոցեսը դպրոցում սովորող յուրաքանչյուր աշակերտի համար:

Սահմանված խնդիրների և նպատակների

Իրականացումն ապահովող գործողությունների և միջոցառումների

Ժամանակացույցը 2023-2028թթ.

Հ/հ	1	2	3	4	5	6	7	8
	Նպատակ	**Խնդիր**	**Գործողությունների միջոցառումների ժամանակացույցը**	**Պատասխանատուները /կատարողներ/**	**Արդյունքների գնահատման չափանիշներ**	**Ռիսկները**	**Գործընթացի կազմակերպման համար անհրաժեշտ միջոցները և նյութատեխնիկական պարագաները**	**Վերահսկողություն**
1	Ուսումնառության որակի բարելավում	Իրականացնել ուսուցիչների մասնագիտական կատարելագործ-մանն ուղղված դասընթացներ	2023-2028թթ	Տնօրեն, Տնօրենի ուսումնական աշխատանքի գծով տեղակալ,ՄԿԱ գծով տեղակալ, Դաստիարակչական աշխատանքների կազմակերպիչ, ՄՄ, գրադարանավար	Ուսումնառության ակնհայտ դրական փոփոխություն	Տարբեր պատճառներով, սահմանված ժամանակում ուսուցիչների՝ դասընթացներին չմասնակցելը	Անհրաժեշտ գրականություն, դիդակտիկ նյութեր, լրացուցիչ տեղեկատվություն	Տնօրենության կողմից իրականացվող մշտադիտարկում

2	Ուսուցիչների կամավոր ատեստավորման խրախուսման գործընթաց	Կրթության ռազմավարության արդյունավետության նպատակով մեծ թվով ուսուցիչների կամավոր ատեստացիային նպաստող քարոզչություն	2023-2028թթ	Տնօրեն, Տնօրենի ուսումնական աշխատանքի գծով տեղակալ,ՄԿԱ գծով տեղակալ, Դաստիարակչական աշխատանքների կազմակերպիչ, ՄՄ, գրադարանավար	Ավելի ինքնավստահ և գնահատված մանկավարժական համակազմ	Տարիքից ելնելով որոշ մանկավարժների՝ կամավոր ատեստավորումից հրաժարվելը	Լաբորատորիա, անհրաժեշտ գրականություն, համակարգչային դասասենյակներ	Տնօրենության կողմից հետևողականություն և խրախուսում
3	Մանկավարժների տարակարգ ստանալու գրագետ խրախուսում	Մեծ թվով ուուցիչների մասնակցությունը որոշ դասընթացների, ՏՀՏ գիտելիքների կիրառմանն ուղղված դասեր	2023-2028թթ	Տնօրեն, Տնօրենի ուսումնական աշխատանքի գծով տեղակալ,ՄԿԱ գծով տեղակալ, Դաստիարակչական աշխատանքների կազմակերպիչ, ՄՄ, գրադարանավար	Դասին աշակերտների ուսման որակի բարելավվում	Թղթարարության հետ կապված տարակարգից խուսափելը	Լաբորատորիա, անհրաժեշտ գրականություն, համակարգչային դասասենյակներ	Տնօրենության կողմից հետևողականություն և խրախուսում
4	Տարվա ընթացքում տարբեր մասնագիտությունների տեր մարդկան հետ հանդիպումներ	Հանդիպման արդյունքում աշակերտները կկարողանան հեշտությամբ մասնագիտական կողմնորոշում ձեռք բերել	2023-2028թթ	Տնօրեն, Տնօրենի ուսումնական աշխատանքի գծով տեղակալ,ՄԿԱ գծով տեղակալ, Դաստիարակչական աշխատանքների կազմակերպիչ, ՄՄ	Ավելի ինքնավստահ ու կայացած սաներ	Որոշ մասնագետների կողմից դպրոցի հետ համագործակցության մերժում	Հաճելի միջավայր, կոկիկ դասասենյակներ, խաղաղ մթնոլորտ	Տնօրենության կողմից նոր ու ավելի հետաքրքիր կապերի ամրապնդում

5	Նյութաթեխնիկական բազայի համալրում, նոր համակարգչայն սարքավորումներով և ծրագրերով	Կրթության ռազմավարությունը ՀՊՉ պահանջներին համապատասխան կազմակերպում	2023-2028թթ	Տնօրեն, Տնօրենի ուսումնական աշխատանքի գծով տեղակալ,ՄԿԱ գծով տեղակալ, Դաստիարակչական աշխատանքների կազմակերպիչ, ՄՄ, գրադարանավար	Նորագույն տեխնոլոգիաների կիրառման հնարավորություն, ՏՀՏ հմտություններ	Համակարգչային ոչ լիարժեք իմացություն / ուղղելի է/	Պատրաստակամ աշակերտներ, գիտակ մանկավարժներ և կիրառվող տեխնիկա	Տնօրենության կողմից նոր ու ժամանակակից տեխնիկայի ապահովում /համապատասխան մարմինների օգնությամբ/
6	Ժամանակակից կրթական պահանջներին համապատասխան մարզադահլիճ, մարզասարքեր, նյութաթեխնիկական բազա	Յուրովի և տարբերվող վերաբերմունք ֆիզիկական առողջությանն ու պատրաստությանը	2023-2025թթ	Տնօրեն Համակարգող	Ավելի լուրջ մոտեցում դեպի ֆիզկուլտուրա առարկան	Անկանխատեսելի իրավիճակներ	Տարիքայինառանձնահատկություններից ելնելով ճիշտ մարզասարքեր	Տնօրենության կողմից վերահսկողություն և գույքի պահպանություն

7	Բուֆետ-ճաշարանի աշխատանքի գրագետ կազմակերպում՝ նոր ճափանիշներին ու նորմերին համապատասխան	Նոր պահանջվող նորմերին համապատասխան նյութաթեխնիկական բազայի համալրում՝ ակնկալելով համապատասխան մարմինների աջակցությունը	2023-2028թթ	Տնօրեն Համակարգող	Առողջության նկատառումներից ելնելով, ավելի առողջ և ապահով սնունդ	Տարածքային և ֆինանսական խնդիրներ	Բուֆետ-ճաշարանի՝ անհրաժեշտ նյութատնտեսական բազայի հարստացում	Տնօրենի և համակարգողի վերահսկողություն
8	ՀՊՉ պահանջներին համապատասխան պայմաններ նախագծային աշխատանքի իրականացման համար	Ինչպես յուրաքանչյուր նորարարություն կրթության ոլորտում, սա ևս պետք է պատվով կատարենք	2023-2028թթ	Տնօրեն, Դասավանդող ուսուցիչներ Տնօրենի ուսումնական աշխատանքի գծով տեղակալ,ՄԿԱ գծով տեղակալ, Դաստիարակչական աշխատանքների կազմակերպիչ, ՄՄ, գրադարանավար	Հնարավորություն միավորելու գիտելիքներն ու կարողությունները և ստանալ պիտանի վերջնարդյունք	Նախնական շրջանում թերություններ աշխատանքի կատարման գործընթացում	Հմուտ մարկավարժներ, նպատակասլաց աշակերտներ, անհրաժեշտ նյութեր ու պարագաների	Վերահսկողություն ինչպես տնօրենի, այնպես էլ բոլոր ուսուցիչների կողմից

9.	Համակարգված և պլանավորված աշխատանքների կազմակերպում՝ ուղղված դպրոցում տիրող բուլինգի(աշակերտներին ծաղրելը) դեմ	Սա երևույթ է, որին մենք առնչվել ենք միշտ, բոլոր ժամանակներում և պետք է ամեն ինչ անել ու ներդնել մասնագիտական հնարներն ու ունակությունները, որպեսզի ստանանք ցանկալի արդյունք	2023-2028թթ	Տնօրեն, Դասավանդող ուսուցիչներ Տնօրենի ուսումնական աշխատանքի գծով տեղակալ,ՄԿԱ գծով տեղակալ, Դաստիարակչական աշխատանքների կազմակերպիչ, ՄՄ ԱԽ ԾԽ	Տնօրենի, դպրոցի հոգեբանի, խելացի և մանկավարժական հմտությունների միջոցով փորձել անցկացնել զրույցներ, խաղեր, հետաքրքիր հանդիպումներ տարբեր պատճառներով և նպատակներով, որը հնարավորություն կտա երեխաներին ընկալել և ընդունել իրար ըստ պատշաճի	Դժվար կլինի միանգամից վերացնել այս տգեղ երևույթը, բաըց եթե կա ցանկություն, կա նաև հաջողության հասնելու հնարավորություն	Գիտակ ծնողներ, կարողունակ աշակերտներ, Իր գործի վարպետ հոգեբան, հմուտ մանկավարժներ, անհրաժեշտության դեպքում հատուկ հյուրեր	Վերահսկողություն ինչպես տնօրենի, այնպես էլ բոլոր ուսուցիչների կողմից
10	Որպես երրորդ օտար լեզու՝ չինարենի մուտքը դպրոց	Սա շատ լուրջ և պատասխանատու գործընթաց է, որը չի կարող իրականություն դառնալ առանց համապատասխան մարմինների օգնության և մեծ աշխատասիրության	2023-2028թթ	Տնօրեն Համապատասխան մարմիններ Չինական դեսպանատուն Համապատասխան մասնագետներ	Տնօրենի նախաձեռնությամբ՝ կատարելով օրենքի նորմերին համապատասխան բոլոր աշխատանքների,	Որքան էլ որ վախի վտանգ կլինի, մենք այն կհաղթահարենք, քանզի յուրաքանչյուր նորը ինքնավստահության մի նոտայի ավելացում է ակնկալում:	ՀՊՉ պահանջներին համապատասխան ծրագիր, հմուտ մասնագետների առկայություն, պատրաստակամ աշակերտներ և գիտակ ծնողներ:	Վերահսկողություն համապատասխան մարմինների և տնօրենության կողմից

Լիահույս եմ, որ զարգացման սույն ծրագիրը կիրականանա, քանզի մանկավարժական կոլեկտիվը կհաղթահարի բոլոր խոչընդոտները, կիրականացնի բոլոր ծրագրերը:

Այո՛, այսօր մեր երկրում իրավիճակ է փոխվել, այսօր, քան երբևէ, կարևորվում է գիտելիքը, կարևորվում է լիարժեք մասնագետը, և դպրոցի հիմնական առաքելությունն է դաստիարակել ապագա մարդ քաղաքացուն, ով կլինի հպարտ իր գիտելիքով, կունենա ազգային մշակույթի, պատմության գիտակցում, կկրի ազգային հոգեկերտվածքի լավագույն հատկանիշները, իր գիտելիքներով կծառայի իր ազգին, իր հայրենիքին: